ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՄՄ

«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ը. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ - ԺԱ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուն հայ միջնադարյան մատենագրության գանձերից է. «Սուրբ գանձարան», «որ է դեղ եւ սպեղանիք ցաւագնելոց եւ մեղանչելոց»[1], «արագ բժիշկս հոգւոց մերոց, մեղաց մերոց լուծիչ»[2]:

Հայոց եկեղեցական իրավունքի այս բացառիկ հուշարձանը կազմվել է Ը. դարում՝ Հովհաննես Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսի (717-728 թթ.) նախաձեռնությամբ: Ձեւավորումից ի վեր «Կանոնագիրք Հայոց»-ը գործածվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում՝ կանոնակարգելով հոգեւոր-եկեղեցական, ծիսական, դավանաբանական, տնտեսական, ամուսնաընտանեկան եւ տարաբնույթ խնդիրներ:

Հովհաննես Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, որ բաղկացած էր 24 կանոնախմբից[3], հետագա դարերում շարունակական խմբագրությունների հետեւանքով ընդլայնվել է՝ ընդգրկելով նորանոր կանոնախմբեր:

Պատմական վկայությունների, ձեռագրական վաղ տվյալների բացակայությամբ պայմանավորված՝ այսօր դժվար է ցույց տալ, թե այդ լրացումները երբ եւ ում կողմից են կատարվել, կամ՝ հերթական կանոնախումբը առանձի՞ն, թե՞ մի քանի այլ կանոնախմբերի հետ է ընդգրկվել ժողովածուի մեջ:

Ի. դարում Ս. Տիգրանյանը, Ն. Ակինյանը եւ Վ. Հակոբյանը, հիմնվելով պահպանված մատենագրական վկայությունների վրա, իրենց աշխա-

---

[1] Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. 4403, թ. 283ա:
[2] ՄՄ, ձեռ. 3788, թ. 92բ:
[3] «Կանոնագիրք Հայոց», աշխ.՝ Վ. Հակոբյանի, հ. Ա., Երեւան, 1964, էջ 18-537:

տություններում փորձել են հնարավորին չափ պատասխանել այս հարցերին՝ թվագրելով կանոնական այս կամ այն շերտի ավելացման ժամանակը:

Համադրելով նախորդ ուսումնասիրողների տեսակետները մեր ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած նոր փաստերի հետ՝ սույն հոդվածում կփորձենք նորովի ներկայացնել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ Ը. դարի երկրորդ կեսից մինչեւ ԺԱ. դարի երկրորդ կեսն (մինչեւ 1098 թթ.) իրականացված խմբագրությունները՝ կարեւորելով այն հանգամանքը, որ մինչեւ ԺԱ. դարի առաջին կեսը (1056-1059 թթ.)[4] *դեռեւս գոյություն չունեին Կանոնագիրք ձեռագրերի արդի բաժանման Ա. եւ Բ. խմբերը*[5]*:*

Ս. Տիգրանյանի կարծիքով՝ «Հովհաննես Իմաստասիրի հորինած հավաքածուն» սկսել է աճել հենց Ը. դարում, եւ դրան ավելացված առաջին կանոնադրությունը եղել է Սիոն կաթողիկոսի (767-775 թթ.) կամ Պարտավի ժողովի (768 թ.) կանոնախումբը: Դժվարանալով նշել մյուս կանոնախմբերի ընդգրկման ճշգրիտ ժամանակը՝ Ս. Տիգրանյանը Անանիա Մոկացի կաթողիկոսի (946-968 թթ.) թղթերում[6] *առկա վկայությունների հիման վրա ցույց է տալիս, որ վերջինիս «ձեռին յեղած հաւաքածուում արդէն կար 40-րդ (իմա՛ 34՝ Ն. Վ.) [«Երկրորդ Նիկիական» անունով յայտնի] կանոնադրութիւնը»*[7]*:*

Ն. Ակինյանը եւս «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հետագա ընդլայնման սահմանները զատորոշում է Անանիա Մոկացու թղթերի հիման

---

[4] 1056-1059 թթ. միջակայքում է առաջացել Կանոնագիրք ձեռագրերի Բ. խումբը. այս մասին առավել մանրամասն տես՝ **Ն. Վարդանյան**, Կանոնագիրք ձեռագրերի Բ. խմբի կազմավորումն ու հետագա խմբագրությունը 78 կանոնախմբերի սահմաններում, ՊԲՀ, 2014, թ. 3, էջ 132-133:

[5] Կանոնագիրք ձեռագրերի Ա. եւ Բ. խմբերը, հիմքում ունենալով Հովհաննես Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, միմյանցից տարբերվում են ընդգրկած կանոնախմբերի քանակով եւ դրանց հաջորդական դասավորվածությամբ: Ձեռագրերի Ա. խումբը բաղկացած է 57-60 կանոնախմբից. այստեղ Հովհաննես Օձնեցու՝ 32 կանոնից բաղկացած կանոնախումբը 24-րդ համարի ներքո է: Կանոնագիրք ձեռագրերի Բ. խումբն ընդգրկում է 78-81 կանոնախումբ. այստեղ Հովհաննես Օձնեցու կանոնախումբը 36-րդ կամ 42-րդ համարի ներքո է: Կանոնագիրք ձեռագրերի Ա. եւ Բ. խմբերի պայմանական այս անվանումները տվել է Վ. Հակոբյանը (տես «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., Ներածություն, էջ XXX):

[6] «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Պատճառ յաղագս զխոսրով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոսն, Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս որ ասեն, թէ մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին եւ վասն մի լինելոյ կոչմանն, Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի», կազմ. եւ հրատ.՝ Գ. Տէր-Մկրտչեան, «Արարատ», 1897, Յունիս (Յաւելուած), էջ 275-288:

[7] **Ս. Տիգրանեան**, Հայոց իրաւունքի պատմութեան ներածութիւն (մեքենագրված, ձեռագրի իրավունքով), Երեւան, 1923, էջ 179:

վրա: Սակայն, ի տարբերություն Ս. Տիգրանյանի, Ն. Ակինյանը ենթադրում է, որ Անանիա Մոկացու օգտագործած Կանոնագիրքն ընդգրկել է 24 կանոնախումբ: Այն փաստը, որ Անանիա Մոկացին իր թղթերը շարադրելիս չի գործածել Մակար Երուսաղեմացու թուղթը, իսկ Անանիա Հաղպատեցին իր «Հակաճառութիւն»-ը գրելիս օգտվել է այդ թղթի ընդարձակ տարբերակից, հիմք է տալիս Ն. Ակինյանին կարծելու, «թէ Կանոնագիրքը մինչեւ 1050 ծանօթ էր հրապարակին միայն Ա.-ԻԵ. (24՝ Ն. Վ.) գլուխներով»[8]*: Ապա հաշվի առնելով 57 կանոնախմբից բաղկացած, 1098 թ. Կիլիկիայում ընդօրինակված հնագույն ձեռագիր Կանոնագիրքը (Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք, թիվ 131)՝ հավելում է. «Ընդարձակուած Կանոնագրքին կը պատահինք առաջին անգամ 1098ին, երբ հին Հաւաքումը գտած է ԻԶ.-ԾԳ. (իմա՛ 25-57՝ Ն. Վ.) յաւելուածական մասեր»*[9]*:*

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հետագա ընդլայնման մասին իր տեսակետն է առաջադրել նաեւ Վ. Հակոբյանը[10]*՝ լծորդելով այն Ս. Տիգրանյանի եւ Ն. Ակինյանի կարծիքների հետ: Նա եւս ընդունում է, որ Հովհաննես Օձնեցուց հետո «Կանոնագիրք Հայոց» ժողովածուին առաջինն ավելացվել է Սիոն կաթողիկոսի կամ Պարտավի ժողովի՝ 25-րդ համարի ներքո զետեղված կանոնախումբը: Այս բնագրից հետո ներմուծված կանոնախմբերի մոտավոր սահմաններն ուսումնասիրողը, նախորդների նման, զատորոշում է Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերում առկա կանոնական քաղվածքների հիման վրա:*

Այսպես՝ խոսելով Ն. Ակինյանի տեսակետում առկա անհամաձայնությունների մասին՝ Վ. Հակոբյանը նշում է, որ Անանիա Մոկացին իր թղթերը գրելիս օգտվել է Կանոնագրքի մի այնպիսի տարբերակից, ուր առկա են եղել Առաքելական, Կղեմեսի, Հարանց հետեւողաց, Անկյուրիայի, Նիկիայի, Բարսեղ Կեսարացու, Սահակ Պարթեւի, Շահապիվանի եւ Երկրորդ Նիկիական կանոնախմբերը: Միեւնույն ժամանակ հիմնվելով այն փաստի վրա, որ Անանիա Մոկացին չի օգտվել Մակար Երուսաղեմացու թղթից՝ Վ. Հակոբյանը եզրակացնում է՝ Անանիա Մոկացու ժամանակ՝ Ժ. դարի 40–60-ական թվականներին, Կանոնագրքում եղել է Երկրորդ Նիկիական կանոնախումբը՝ 34-րդ համարով, եւ բացակայել է 39 (ԼԹ.) համարի տակ դրված՝ Երուսաղեմի հայրապետ Մակար Ա.-ի կանոնախումբը:

---

[8] **Ն. Ակինյան**, Թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի Հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց Յաղագս կարգաց Եկեղեցւոյ, Բնագիր եւ քննութիւն, Վիեննա, 1930, էջ 108:

[9] Անդ, էջ 109:

[10] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., Երեւան, 1971, Ներածություն, էջ XV-XXX:

Նշենք նաեւ, որ Վ. Հակոբյանը կասկածում է, թե Անանիա Մոկացու ժամանակ Կանոնագիրքը ավարտվել է Երկրորդ Նիկիական կանոնախմբով, եւ ենթադրում՝ այն կարող էր եզրափակված լինել 34-38-րդ կանոնախմբերից որեւէ մեկով:

Ինչեւէ՝ Վ. Հակոբյանը դժվարանում է հստակ սահման նշել եւ գտնում է, «որ Կանոնագրքի Ը. դարի խմբագրությունում ընդգրկված Ա.-ԻԴ. կանոնախմբերին Օձնեցուց հետո մինչեւ Անանիա Մոկացին ավելացվել են ԻԵ.-ԼԴ. կամ ԻԵ.-ԼԸ. կանոնախմբերը»[11]*:*

Հարկ ենք համարում ընդգծել, որ Ը. դարի առաջին կեսից հետո ներմուծված կանոնական խմբերի սահմանների տարանջատումն ու դրանց ավելացման հստակ ժամանակի ճշգրտումը իսկապես դժվարին խնդիր է:

Այդուհանդերձ, այսօր Կանոնագիրք ձեռագրերի Բ. խմբի կազմավորման ժամանակի նոր թվագրման շնորհիվ[12] *կարող ենք փաստել, որ Կանոնագիրք ձեռագրերի Ա. խմբի ԻԵ.-ԽԱ. (25-41) կանոնախմբերը «Կանոնագիրք Հայոց» ժողովածու են ներմուծվել մինչեւ ԺԱ. դարակեսը՝ մինչեւ 1056-1059 թթ.: Այս ժամանակահատվածում Հովհաննես Օձնեցու կազմած եւ հետագայում ընդարձակված ժողովածուի ԽԱ. (41) կանոնախմբերի վերախմբագրման եւ վերադասավորման արդյունքում է ձեւավորվել «Կանոնագիրք Հայոց»-ի նոր տարբերակը՝ Կանոնագիրք ձեռագրերի Բ. խումբը:*

Նշենք, որ Վ. Հակոբյանի կարծիքով՝ Կանոնագիրք ձեռագրերի Ա. խումբը Բ. խմբի առաջացման ժամանակ բովանդակել է 40 կանոնախումբ[13]*: Մինչդեռ ուսումնասիրելով ձեռագրերի Ա. խմբի հնագույն՝ Նոր Ջուղայի թիվ 131 ձեռագիրը (1098 թ.)*[14]*, ՄՄ 3148 (ԺԷ. դ.) եւ Կանոնագիրք ձեռագրերի Բ. խմբի սկզբնական տարբերակը ներկայացնող ՄՄ 656 (1661 թ.), 646 (1731 թ.) եւ ՄՄ 10311 (1637 թ.), 9513 (ԺԷ. դարավերջ - ԺԸ. դարասկիզբ՝ մինչեւ 1708 թ.)*[15] *թվահամարի ձեռագրերը՝ եկել ենք այն եզրա-*

---

[11] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., Ներածություն, էջ XVII:

[12] Առավել մանրամասն տես **Ն. Վարդանյան**, Կանոնագիրք ձեռագրերի Բ. խմբի կազմավորումն..., էջ 132-133:

[13] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., Ներածություն, էջ XXI–XXV:

[14] Ինչպես Վ. Հակոբյանը, մենք եւս օգտվել ենք այս ձեռագրի լուսանկարչական պատճենից (ՄՄ, Դրսի լուսանկարների հավաքածու, թ. 203):

[15] Նշված վերջին երկու ձեռագրերը Ա.-Խ. (1-40) կանոնախմբերի սահմաններում ընդօրինակված են ձեռագրերի Բ. խմբի սկզբնական տարբերակի մի ձեռագրից եւ պահպանել են այդ տարբերակի կառուցվածքային առանձնահատկությունները (առավել մանրամասն տես **Ն. Վարդանյան**, Գեւորգ Երզնկացին եւ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, ԲԵՀ. Հայագիտություն, 2015, թ. 2, էջ 55-59):

հանգման, որ Կանոնագիրք ձեռագրերի Ա. խումբը Բ. խմբի առաջացման ժամանակ ընդգրկել է ոչ թե 40, այլ՝ 41 կանոնախումբ:

Այսպես՝ 1098 թ. ընդօրինակված՝ Նոր-Ջուղայի 131 թվահամարի Կանոնագրքի առարկայական ցանկի «Դ. Թէ զորս պարտ է կարգել ի պաշտաւն եպիսկոպոսութեան եւ քորեպիսկոպոսութեան, եւ զորս ոչ» վերնագրի դիմաց համապատասխան կանոնների կարգահամարների մեջ նշված է նաեւ ՌՄԾ.[16] (=տպ. ՌՄԾԸ.[17]) կարգահամարը: Սա Կանոնագիրք ձեռագրերի Ա. խմբում ԽԱ. (41) համարի ներքո գտնվող՝ «Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի եւ Թարգմանչի աշակերտ եղելոյ Սրբոյն Սահակայ Մեծի հայրապետի Հայոց կաթողիկոսի Բան կանոնական. Գլուխ Ա.»[18] կանոնախմբի ընդհանուր կարգահամարն է: Եւ եթե, Վ. Հակոբյանի կարծիքով, նշված կարգահամարը հետագայի հավելում է[19], ապա մենք, ուսումնասիրելով այս ձեռագրի լուսանկարչական պատճենը, կարծում ենք, որ, ի տարբերություն Վ. Հակոբյանի նշած մյուս կարգահամարների, ՌՄԾ. կարգահամարը գրչության ժամանակ է գրվել եւ նախագաղափար օրինակի ցանկի մասն է կազմել:

Այդ է փաստում նաեւ Նոր Ջուղայի թիվ 131 ձեռագրին հարող եւ նույն ենթախմբին պատկանող ՄՄ 3148[20] թվահամարի գրչագրի առարկայական ցանկը[21]: Այս ձեռագիր Կանոնագրքի առարկայական ցանկը եւս ընդգրկում է Ա.-ԽԱ. (1-41) կանոնախմբերի ընդհանուր համարները (Ա.-ՌՄԾ.), իսկ ԽԲ.-ԾԷ. (42-57) կանոնախմբերի ընդհանուր կարգահամարները (ՌՄԾԱ.-ՌՅԻԴ.) ցանկում առհասարակ արտացոլված չեն:

Այսինքն՝ Հովհան Մանդակունու «Բան կանոնական» կանոնախումբը՝ «ՌՄԾ.»[22] ընդհանուր համարով, «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեջ ընդգրկվել է մինչեւ 1056-1059 թթ. իրականացված խմբագրության կամ խմբագրությունների ժամանակ՝ ներառվելով նաեւ ժողովածուի առարկայական ցանկում:

Այս տեսակետը հաստատում են նաեւ Կանոնագիրք ձեռագրերի Բ. խմբի՝ 1056-1059 թթ. ձեւավորված սկզբնական տարբերակը ներկայաց-

---

[16] Հմմտ. «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 5:
[17] Անդ. նաեւ՝ «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., էջ 239:
[18] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., էջ 239:
[19] Անդ, Ներածություն, էջ XXIII, տողատակ 1:
[20] Նշենք, որ այս ձեռագրի համառոտ նկարագրության մեջ Վ. Հակոբյանը ենթադրում է, որ այն ընդօրինակվել է Նոր Ջուղայի թիվ 131 ձեռագրից (տես «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., Ներածություն, էջ LXVII):
[21] ՄՄ, ձեռ. 3148, թ. 1բ-8ա:
[22] Անդ, թ. 170ա, 1բ:

նող վերը նշված գրչագրերը: Այստեղ եւս Հովհան Մանդակունու «Բան կանոնական» ընագիրն առկա է եւ հաջորդում է «Յոհաննու Մանդակունոյ Հայոց կաթուղիկոսի. [Գլուխք Թ.]» կանոնախմբին: Հովհան Մանդակունու այս երկու կանոնախմբերը Կանոնագիրք ձեռագրերի Բ. խմբի նախնական տարբերակում տեղադրվել են միեւնույն ԼԳ. (33) համարի ներքո[23]*, այդ պատճառով էլ «Բան կանոնական»-ը արտացոլված չէ ցանկերում*[24]*:*

Մատենագրական տեղեկությունների եւ փաստերի բացակայությամբ պայմանավորված՝ 1056-1059 թթ. հետո կատարված խմբագրության կամ խմբագրությունների դեպքում եւս անհնար է ցույց տալ Կանոնագիրք ձեռագրերի Ա. խմբի ԽԲ.-ԾԷ. (42-57) կանոնախմբերի աճը, խոսել խմբագրի կամ խմբագիրների մասին:

Միայն կարող ենք արձանագրել, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն Կանոնագիրք ձեռագրերի Ա. խմբում ԺԱ. դարավերջին արդեն իսկ բովանդակում էր 57 կանոնախումբ, ինչի խոսուն վկան է ձեռագրերի Ա. խմբի հնագույն՝ 1098 թ. (Նոր Ջուղա, թիվ 131) Կիլիկիայում ընդօրինակված գրչագիրը: Արժեքավոր այս ձեռագրի բովանդակության եւ հիշատակարանում պահպանված տեղեկությունների հիման վրա էլ Ս. Տիգրանյանը[25]*, Ն. Ակինյանը*[26] *եւ Վ. Հակոբյանը*[27] *փորձել են ներկայացնել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ընդգրկման սահմանները ԺԱ. դարում եւ բացահայտել հավանական խմբագիրներին:*

Ստորեւ փորձենք ներկայացնել մեր առաջադրած տեսակետներն այս հարցի առնչությամբ: Այսպես՝ 1098 թ. ընդօրինակված Նոր Ջուղայի թիվ 131 ձեռագրի հիշատակարանում Հովհաննես գրիչը հայտնում է, որ Կանոնագիրք մատյանն սկսել է ընդօրինակել նախ Սեւ լեռան Պառլահու վանքում, ապա «անդ նեղեալ յեղեռնաթոյն ոմանց առաջնորդաց»[28]*՝ թերի թողնելով ձեռագրի ընդօրինակումը՝ տեղափոխվել է Արմեն լեռան Հովհանա անապատ: Այստեղ վանահայր Մելիտեն եւ փոխանորդ Գրիգորիսը.*

---

[23] ՄՄ, ձեռ. Հմ 10311, թ. 180բ-183բ:

[24] Առավել մանրամասն տես **Ն. Վարդանյան**, Կանոնագիրք ձեռագրերի Բ. խմբի կազմավորումն..., էջ 131-133. նույն հեղինակի՝ «Գեւորգ Երզնկացին եւ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն», էջ 51:

[25] Ս. Տիգրանյան, նշվ. աշխ., էջ 180:

[26] Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 93, 109:

[27] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., Ներածություն, էջ XXVI-XXVII:

[28] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե.-ԺԲ. դդ.», աշխ.՝ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 118: Նոր Ջուղայի թիվ 131 ձեռագրի մեր օգտագործած լուսանկարչական պատճենում (ՄՄ, Դրսի լուսանկարների հավաքածու, թ. 203) թերթակալումը հստակ չէ, այդ պատճառով որոշ հղումներ կատարում ենք ըստ տպագրի:

«Գիտացեալ զթերութիւն գործոյս եւ գիտակ եղեալ (այս եւ հետագա ընդգծումները՝ Ն. Վ.), թէ որ կամակից լինին գործելեացն հաւասար են գործողացն, հրամայեն լնուլ զպակասութիւն գործոյս բարեաց...»[29]*:*

Ն. Ակինյանը, վերլուծելով հիշատակարանի ընդգծված հատվածի տեղեկությունը, կարծում է, որ այստեղ գրիչը նկատի ունի Պառլահու վանքում կիսատ թողնված ընդօրինակության շարունակումը: Միեւնույն ժամանակ վաստակաշատ հայագետը չի բացառում, որ հիշատակարանի այդ հատվածը կարող է «ակնարկել նաեւ Կանոնագրքին պակաս մասերու նոր յաւելուածներով ճոխանալը»[30]*:*

Վ. Հակոբյանը, Ն. Ակինյանի այս ենթադրությունը համարելով երկդիմի, գտնում է, որ գրչի՝ «լնուլ զպակասութիւն թերութեան գործոյս» խոսքերը վերաբերում են ե՛ւ կիսատ մնացած ձեռագրի ընդօրինակությունը ավարտելուն, ե՛ւ նոր կանոնախմբեր ավելացնելուն: Ուսումնասիրողը ենթադրում է, որ նախագաղափար Կանոնագիրքը՝ տեր Խաչիկի օրինակը, ունեցել է 40 (Ա.-Խ.) կանոնախումբ, իսկ Նոր Ջուղայի թիվ 131 ձեռագրում առկա մնացյալ 17 կանոնախմբերը՝ ԽԱ.-ԾԷ., ավելացվել են 1098 թ. ընդօրինակության ժամանակ՝ Հովհանա անապատի վանահայր Մելիտեի, փոխանորդ Գրիգորիսի եւ ձեռագրի գրիչ Հովհաննեսի աշխատասիրության շնորհիվ[31]*: Իր այս տեսակետը Վ. Հակոբյանը հիմնավորում է այն փաստով, որ, թեեւ նշված ձեռագիրը բովանդակում է 57 կանոնախումբ, սակայն առարկայական ցանկում, ըստ նրա, ընդգրկված են 40 կանոնախմբերի նյութերը, իսկ մնացյալ 17 կանոնախմբերի նյութերը ցանկում արտահայտված չեն*[32]*:*

Հարկ է ընդգծել, սակայն, որ ԺԱ. դարի երկրորդ կեսին իրականացված խմբագրության ժամանակ Կանոնագիրք ձեռագրերի Ա. խումբ ներմուծվել են ոչ թե ԽԱ.-ԾԷ. (41-57), այլ ԽԲ.-ԾԷ. (42-57) կանոնախմբերը, քանզի, ինչպես ցույց տրվեց վերեւում, «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն ԺԱ. դարի առաջին կեսին արդեն իսկ ընդգրկում էր Ա.-ԽԱ. (1-41) կանոնախմբերը:

Նշենք, որ չենք կիսում նաեւ Վ. Հակոբյանի այն տեսակետը, թե «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ԺԱ. դարի խմբագրությունն իրականացրել են Հովհանա անապատի վանահայր Մելիտեն, փոխանորդ Գրիգորիսը եւ ձեռագրի գրիչ Հովհաննեսը:

---

[29] Անդ:
[30] Ն. Ակինյան, նշվ. աշխ, էջ 109:
[31] «Կանոնագիրք Հայոց», հ. Բ., Ներածություն, էջ XXVI-XXVII:
[32] Անդ, էջ XXVI:

Մեր կարծիքով՝ միայն այն հանգամանքը, որ 1098 թ. ընդօրինակված Կանոնագրքի առարկայական ցանկում ընդգրկված են Ա.-ԽԱ. (1-41, ըստ Վ. Հակոբյանի՝ Ա.-Խ.) եւ չկան ԽԲ.-ԾԷ. (42-57, ըստ Վ. Հակոբյանի՝ ԽԱ.-ԾԷ.) կանոնախմբերի կանոնների ընդհանուր համարները, դեռեւս չի նշանակում, թե գաղափար օրինակը թերի է եղել, եւ այնտեղ բացակայել են ԽԲ.-ԾԷ. (42-57, ըստ Վ. Հակոբյանի՝ ԽԱ.-ԾԷ.) կանոնախմբերը: Իր ուսումնասիրության ընթացքում Վ. Հակոբյանն անտեսել է ուշագրավ այն փաստը, որ Նոր Ջուղայի թիվ 131 ձեռագրում, իր բնորոշմամբ, «թերի» առարկայական ցանկից առաջ ընդօրինակված բովանդակության ցանկն ամբողջական է եւ ընդգրկում է Ա.-ԾԷ. (1-57) կանոնախմբերի խորագրերը[33]: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ հիշատակարանում Հովհաննես գրիչը, խոսելով նախագաղափար օրինակի մասին, որեւէ ակնարկ չի անում, թե այն թերի է եղել, այլ խնդրում է օրհնությամբ հիշել «եւ զտէր Խաչիկ, որ յերկար ժամանակ անարատ սիրով եւ յաւժար կամաւք զաւրինակս ընձեռեաց»[34]:

Այսպիսով՝ կարող ենք հաստատել, որ Հովհաննես գրիչն իր Կանոնագիրքն ընդօրինակել է մեկ գաղափար օրինակից, որն արդեն իսկ բովանդակում էր 57 կանոնախումբ:

Հետեւաբար՝ Կանոնագիրք ձեռագրերի Ա. խմբի հերթական խմբագրությանը՝ ԽԲ.-ԾԷ. (42-57) կանոնախմբերի շրջանակներում, Արմեն լեռան Հովհանա անապատի վանահայր Մելիտեն, փոխանորդ Գրիգորիսը եւ ձեռագրի գրիչ Հովհաննեսը որեւէ առնչություն չեն ունեցել: Դժվար է ենթադրել, որ ԺԱ. դարում այնպիսի կարեւոր ժողովածուում, ինչպիսին էր «Կանոնագիրք Հայոց»-ը, առանց կաթողիկոսի կամ եկեղեցական ժողովի հաստատման, որեւէ մեկը կարող էր հավելել նոր կանոնախմբեր: Չէ՞ որ իր հիշատակարանի սկզբում բավական պատկերավոր ներկայացնելով կանոնների առաջացման պատմությունն ու պատճառները՝ Հովհաննես գրիչը նշում է նաեւ, թե «բարերար եւ մարդասէր Տէրը», ում միջոցով է դրանք հաստատում, «...ի ձեռն աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորաց եւ հոգիագումար միաբանելոց հարց եւ հայրապետաց... սուրբ սինհոդոսաց»[35], եւ ապա

---

[33] «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 3-4. հմմտ. ՄՄ, Դրսի լուսանկարների հավաքածու, թ. 203 (Նոր Ջուղա, ձեռ. 131):

[34] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե.-ԺԲ. դդ.», էջ 119:

[35] ՄՄ, Դրսի լուսանկարների հավաքածու, թ. 203 (Նոր Ջուղա, ձեռ. 131), թ. 319ա (ըստ լուսանկարչական պատճենի): Նշենք, որ Ե.-ԺԲ. դարերի հիշատակարաններում գրչագրի հիշատակարանի այս եւ հաջորդ հատվածը ներկայացված չէ:

հավելում. «...զայս աւանդ առեալ, հարքն մեր հաւաքեցին ի մի զաստուածապարգեւ աւանդս, զկարգս եւ զկրաւնս եկեղեցւոյ՝ հասուցին առ մեզ»[36]:

Ավելացված կանոնախմբերի ընդհանուր կարգահամարների բացակայությունը առարկայական ցանկերում, մեր կարծիքով, խոսում է այն մասին, որ ԽԲ.-ԾԷ. (42-57) կանոնախմբերն ավելացնողները (մինչեւ 1098 թ.) չեն խմբագրել առարկայական նախկին ցանկը եւ չեն հավելել նոր մուծված կանոնների կարգահամարները, թեեւ բովանդակության ցանկում ավելացրել են նոր կանոնախմբերի խորագրերը, ինչը եւ արտացոլված է Նոր Ջուղայի թիվ 131 եւ ՄՄ 3148 թվահամարի ձեռագրերում[37]:

Ամփոփելով՝ փաստենք, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն Ը. դարի երկրորդ կեսից հետո իրականացված խմբագրությունների շնորհիվ աստիճանաբար ընդարձակվել է եւ արդեն ԺԱ. դարի առաջին կեսին՝ մինչեւ 1056-1059 թթ., ընդգրկել ԽԱ. (41) կանոնախումբ: Այս խմբագրությունների ընթացքում, ի հավելումն Հովհաննես Օձնեցու ժողոված 24 կանոնախմբերի, ժողոված են ներմուծվել ԻԵ.-ԽԱ. (25-41)[38] կանոնախմբերը:

«Կանոնագիրք Հայոց» ժողոված ի (ձեռագրերի Ա. խումբ) հերթական խմբագրությունը կատարվել է 1056-1059 թթ. հետո՝ մինչեւ 1098 թ. ընկած ժամանակահատվածում: Այս խմբագրության ժամանակ Կանոնագիրք ձեռագրերի Ա. խմբի ԽԱ. (41) կանոնախմբերին ավելացվել են ԽԲ.-ԾԷ. (42-57)[39] կանոնախմբերը:

РЕЗЮМЕ

«Армянская книга канонов» составленная Католикосом Ованнесом Одзнеци (717-728) в середине 8-го века была многократно отредактирована и постепенно расширена путем включения новых групп канонов. Ввиду отсутствия более ранних исторических свидетельств или данных рукописей, развитие этого сборника может быть прослежено лишь в общих очертаниях.

Изучение цитат из канонов, сохранившихся в трудах армянских летописцев (в частности, в письмах Анании Мокаци), или в рукописи Книги канонов из монастыря Аменапркич (Спасителя) Новой Джульфи № 131 и ММ3148, а также первоначального варианта рукописной группы “Б” Книги канонов (ММ656, 646, 10311, 9513), показало, что в результате многочисленных редакций, осуществленных в период с середины 8-го и до первой половины 11-го веков (до 1056-1059 гг.), сбор-

[36] Անդ:
[37] «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 3-4, ՄՄ, ձեռ. Հմր 3148, թ. 1աբ:
[38] «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 3-4, 18-537, հ. Բ., էջ 3-243:
[39] «Կանոնագիրք Հայոց», հ. Ա., էջ 4, հ. Բ., էջ 244-304:

ник «Армянской книги канонов» обогатился и состаял из 41 (ԻԱ) канонических групп, последним из которых стал оригинал «Слова о канонах» (Бан Канонакан) Ованнеса Мандакуни.

Очередная редакция «Армянской книги канонов» (рукописная группа “A”) была осуществлена до 1098 г. Об этом свидетельствуют сопоставление и изучение оглавления и предметного указателя самой старой рукописи «Армянской книги канонов» 1098 г. (Новая Джульфа, № 131), скопированной в Киликии, а также информация, содержащаяся в колофоне писца. Неизвестным редактором или редакторами этой версии сборника «Армянской книги канонов» были добавлены новые группы канонов с 42-ой по 57-ую (ԻԲ-ԾԷ) (рукописная группа “A”), которые, будучи включенными в оглавление «Армянской книги канонов», не нашли отражения в предметном указателе.

SUMMARY

The “Armenian Book of Canons” to be first compiled by Catholicos Hovhannnes Odznetsi (717-728) in the 8th century was later re-edited and gradually expanded many times including new groups of canons. Due to the lack of historical evidence or earlier manuscript data the development of this collection may be outlined only in general detail.

The study of the quotations of canons preserved in the works of Armenian scholars (specifically in Anania Mokatsi’s letters), or of the manuscript Canon Books of Amenaprkich Monastery in Nor Jugha No 131 and MM3148, as well as the initial version of the B group of Canon Book manuscripts (MM656, 646, 10311, 9513) showed that as a result of numerous amendments made between the mid of the 8th and the first half of the 11th centuries (up to 1056-1059) the collection of “Armenian Book of Canons” has been enriched through adding 41 (ԻԱ) canon groups, the last of them being the original of “Ban Canonakan” (Canonic Word) by Hovhannes Mandakuni.

The next edition of the “Armenian Book of Canons” (manuscript tradition “A”) has been conducted before 1098. This is testified by the collation and study of the content directory and subject index of the oldest manuscript of the “Armenian Book of Canons” copied in Cilicia before 1098 (Nor Jugha, No. 131), as well as by information contained in the colophon of the scribe. An unknown editor or editors of this version have added new - 42nd - 57th (ԻԲ-ԾԷ) groups of canons to the collection of “Armenian Canon Book” (manuscript tradition “A”), which were included into the directory of the “Armenian Canons” and were not reflected in the subject index.